ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 729-Ա/2 **«25» մարտ 2025 թ.**

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐՏԵՐԿՐԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ «POSTDOC-ARMENIA - 2025»» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի փետրվարի 13-ի N 156-Ն որոշմամբ հաստատված հավելված N 3-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության գիտական դրամաշնորհային ֆինանսավորման ձևով պետական ֆինանսավորման կարգի» 14-րդ կետով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 4-ի N 2314-Ա/2 հրամանով ստեղծված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2025 թվականի մարտի 19-ի նիստի N 25IRF/25PostDoc-3 արձանագրությունը և ելնելով բյուջետային հատկացումների ծավալից՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «PostDoc-Armenia - 2025»» մրցույթի արդյունքներով ֆինանսավորման երաշխավորված գիտական նախագծերի ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին՝

1) ապահովել մրցույթի արդյունքների վերաբերյալ հայտատուներին սահմանված կարգով իրազեկումը,

2) կազմակերպել համապատասխան պայմանագրերի կնքումը,

3) ֆինանսավորման երաշխավորված գիտական նախագծերի ֆինանսավորումը սկսել պայմանագրերով նախատեսված ժամկետներում:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
«25» մարտ 2025 թ. N
729-Ա/2 հրամանի

ՑԱՆԿ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐՏԵՐԿՐԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ «POSTDOC-ARMENIA - 2025»» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ

	Ծածկագիր	Ղեկավար	Նախագծի վերնագիր	Կազմակերպություն	Ֆինանսավորման ծավալ (հազ. դրամ)
1	25PostDoc-1C004	Կադուկուտիմադաթիլ Հարի	Տարածաժամանակի կորություն ունիվերսալ դրսևորումները քվանտային պրոցեսներում	«Ա.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ	16200.0
2	25PostDoc-1C002	Հովհաննիսյան Ռազմիկ	Փուլ փոխող 2D նյութերի օպտոկառուցվածքային հատկությունների հետազոտում	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	12600.0
3	25PostDoc-1F001	Սուկովատի Լև	Orb2-ի իզոֆորմների և մՌՆԹ-ի փոխազդեցությունների հաշվողական ուսումնասիրությունը և դրանց դերը երկարաժամկետ հիշողության մեջ	ՀՀ ԳԱԱ «Լ.Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտ» ՊՈԱԿ	16200.0
4	25PostDoc-1C003	Վեյ Չենան	Քիրալության դերը Հայզենբերգի շղթայում. հետազոտություններ կրիտիկալությունում, կոնֆորմ դաշտի տեսությունում, ոչ հավասարակշիռ դինամիկայում և դրանց կիրառությունները քվանտային ինֆորմատիկայում	«Ա.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ	12600.0